ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 26.1-րդ կետ.

«26.1) սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետառողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի պաշարների արդյունահանման աշխատանքների իրականացումը ապահովել GPS համակարգով կահավորված հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տրանսպորտային միջոցների և/կամ սարքավորումների միջոցով: Սույն կետում նշված տրանսպորտային միջոցները կամ սարքավորումները GPS համակարգով կահավորված լինելու պայմանները սահմանում է կառավարությունը սույն օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 25-րդ կետում սահմանված կարգով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: